ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Բարձրագոյն հրաման հայ-լուսաւորչական եկեղեցու կալուածների մասին:—„Правит. Вѣст.“ հաղորդագրութիւնն այդպէս իրով:—Կարգադրութիւն հայ-լուսաւորչականների երդման մասին:—Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի շրջաբերականը պշակերտների մէջ դիսցիպլինայի անկման մասին:—Անուշրական ուսումնարանների մէջ մի քանի փոփոխութիւններ:—Պետերբուրգի քաղաքային ինքնավարութեան նոր կանոնադրութիւնը:—Գործարանական տեսուչների կախումը նորին գործերի մինիստրութիւնից:—Կարգադրութիւն բանուորական աւագների մասին:—Գրամական նպաստ Անդրկովկասում ռուսաց եկեղեցիներին:—Ռուսաց դպրոցներ Ֆինլանդիայում:—Հողային կրեդիտի յատուկ կոմիտեն:—Քուրայիսի նահ. ազնուակ. վերադարձրուած գումարներ:—Գրամական նպաստ ռուս գաղթականներին:—Բորչալուի գիւղացիների խնդիրը:—Զինուորական ծառայութիւնից վերադարձող տեղացիներ:—Բագուի եւ Թիֆլիսի դէպքերի մասին պաշտօնական հաղորդագրութիւններ:—Միխայլով կայարանի անցքը:—Պոլիցիական պահնորդներ եւրոպ.-Ռուսաստանում:—Սիոնիստների ժողովների եւ նպաստներ ժողովելու արգելումը:—Զանգեզուրի հանքագործների ժողովը:—Կարգադրութիւններ մամուլի մասին:—Վ. Գ. Կորոլենկոյի ծննդեան յիսնամեակը:—† Մ. Փիլիպպով:—† Գ. Տատեան:

Բարձրագոյն հրաման Ռուսաստանի հայ-լուսաւորչական եկեղեցու կալուածների վարչութեան կենտրոնացման մասին կառավարչական հիմնարկութիւնների տեսչութեան մէջ և վերոյիշեալ եկեղեցու՝ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան տեսչութեանը յանձնուելիք միջոցների և գոյքերի մասին, որոնցով ապահովւում էր հայ-լուսաւորչական եկեղեցական դպրոցների գոյութիւնը։

Թագաւոր Կայսրը մինիստրների կոմիտեի որոշման համեմատ՝ Ռուսաստանի հայ-լուսաւորչական եկեղեցու կալուածների վարչութիւնը կառավարչական հիմնարկութիւնների տեսչութեան մէջ կենտրոնացնելու մասին և վերոյիշեալ եկեղեցու

ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան տեսչութեանը յանձնուելիք միջոցների և կալուածների մասին, որոնցով ապահովւում էր հայ-լուսաւորչական եկեղեցական դպրոցների գոյութիւնը, 1903 թւի յունիսի 12-ին Բարձրագոյն հրամայել բարեհաճեց.

I. Հայ-լուսաւորչական եկեղեցու կալուածների յանձնումը պատշաճաւոր մինիստրութիւնների տեսչութեանը և վարչութեանը իրագործել հետևեալ հիմունքներով.

1) Հայ-լուսաւորչական եկեղեցիներին, վանքերին, հոգևոր հաստատութիւններին և հոգևոր դպրոցներին պատկանող բոլոր անշարժ կալուածները, ներքոյ յիշած (յօդ. 2 և նրա ծանօթութիւնը) բացառութիւններով, յանձնել առանձին հաստատած կանոններով որոշած կարգով այդ դաւանութեան հոգևորականութեան հոգևոր հաստատութիւնների վարչութիւնից երկրագործութեան և պետական կալուածների մինիստրի տեսչութեան, իսկ վերոյիշեալ հիմնարկութիւններին պատկանող դրամագլուխները յանձնել ներքին գործերի մինիստրի տեսչութեանը, պահպանելով հայ-լուսաւորչական եկեղեցու սեփականութեան իրաւունքները այդ կալուածների և դրամագլուխների վրայ։

2) Երկրագործութեան և պետական կալուածների մինիստրի տեսչութեանը պէտք է ենթարկուեն հայ-լուսաւորչական եկեղեցու հետևեալ կալուածները.

ա) Թէ բնակութիւն ունեցող և թէ անբնակ հողերը, ինչ անուն էլ ունենան և ինչ տեսակի էլ լինեն նրանք, նոյնպէս առանձին անտառները, մարգագետինները, արօտատեղերը, ձկնորսութեան տեղերը, ջրաղացները և այլն։ Դրանից ի բաց է առնւում սակայն հողի այն տարածութիւնը, որի վրայ գտնւում են եկեղեցիների, վանքերի, մատուռների և այլն շինութիւնները և այն հողերը, որոնց վրայ շինուած են առաջնորդների տները, հոգևոր հաստատութիւնները, ծխական թէ քաղաքային և գիւղական հոգևորականութեան տները և հոգևոր դպրոցների շինութիւնները, այն հողերը, որոնք գտնւում են եկեղեցական կամ գերեզմանոցների շրջապատերի մէջ և, վերջապէս հոգևորականութեան ձեռքում եղած ագարակային հողամասերը, որոնց վրայ գտնւում են այգիներ, բանջարանոցներ, արտեր և այլն, երեք դեսեատինից ոչ աւել տարածութեամբ իւրաքանչիւր ծխական եկեղեցուն կից, որոնք չեն տրւում օտարի ձեռքը եկամուտ ստանալու համար։

բ) Հայ-լուսաւորչական եկեղեցիներին, հոգևորականութեանը և այդ դաւանութեան հոգևոր հիմնարկութիւններին

պատկանող տներից և չինութիւններից այն բոլորը, որոնք հարկաւոր չեն բնակութեան և հէնց իրան հոգևորականութեան և վերոյիշեալ հիմնարկութիւնների անհրաժեշտ տնտեսութեան համար։

Ծանօթութիւն։ Ներկայ կանոնները չեն տարածւում այն անշարժ կալուածների և դրամագլուխների վրայ, որոնք պատկանում են Ս.-Պետերբուրգ և Մոսկուա քաղաքների հայ-եկեղեցիներին։

3) Տեսչութեան վերոյիշեալ կարգին ենթարկել նոյնպէս այն կալուածները և դրամագլուխները, որոնք սրանից յետոյ որպէս նուիրատուութիւններ և կտակով թողուածներ կը ստացուեն ի նպաստ վերոյիշեալ հիմնարկութիւնների։

4) Յիշած կալուածներից ստացուող եկամուտների վերահսկողութիւնը և դրամագլուխների կառավարչութիւնը կենտրոնացնել ներքին գործերի մինիստրութեան մէջ օտար դաւանութիւնների հոգևոր գործերի դեպարտամենտում, ուր երկրագործութեան և պետական կալուածների մինիստրը այդ կալուածների վարչութեան հաշուեւութեան հետ միասին պէտք է յանձնէ նրանցից ստացուած եկամուտները՝ իր տեսչութեան տակ առած անշարժ կալուածների վրայ դրուած բոլոր հարկերը և պարտաւորութիւնները վճարելուց և ստորև մատնացոյց արած յետգումները կատարելուց յետոյ։

Սակայն ներքին գործերի մինիստրութիւնը յանձնում է այդ եկամուտները, նոյնպէս և այն գումարները, որոնք գոյացել են նրա վերահսկողութեան տակ մտած դրամագլուխների տոկոսներից, ստորև ցոյց տրուած հանումներից յետոյ, այն հոգևոր հաստատութիւններին, որոցից այդ կալուածները և դրամագլուխները ընդունուած են։

5) Անշարժ կայքերից ստացուող եկամուտից հանւում են իւրաքանչիւր տարի տալու ա) ոչ աւել, քան 10% երկրագործութեան և պետական կալուածների մինիստրի կարգադրութեամբ՝ վերոյիշեալ անշարժ կայքերի վարչութեան ծախսերի և յատուկ պահեստի դրամագլուխ կազմելու համար, յիշած կայքերի արտակարգ ծախսերին բաւարարութիւն տալու՝ նրանց բարւոքման նպատակով, և բ) 5% ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ թէ կազմելու հայ-լուսաւորչական եկեղեցական օժանդակիչ դրամագլուխ հայ-լուսաւորչական եկեղեցական հաստատութիւնների կարիքները հոգալու համար և թէ այդ եկեղեցու վարչութեան ընդհանուր պահանջների համար, այնպէս որ այդ դրամագլխի մէջ մտնի և աւելորդը վերոյիշեալ (պ. ա.) 10 %-ից։

6) Կանոնաներ կամ թիւրիմացութիւններ ծագելու դէպքում այն հարցի առիթով, թէ արդեօք հոգևորականութեան և հոգևոր հիմնարկութիւնների իրաւասութեան տակ գտնուող այս կամ այն կալուածները և դրամագլուխները ենթակայ են կենտրոնացման կառավարութեան տեսչութեան մէջ, այդ հարցի վճիռը թողնուում է Ներքին գործերի մինիստրի լուծման։

II. Յանձնել Ներքին գործերի մինիստրին ա) մշակել հիմունքներ ծախքեր անելու համար հայ լուսաւորչական եկեղեցու օժանդակ դրամագլխից՝ համաձայն այն կանոնների, որոնք գործադրուում են հռոմէական կաթոլիկ հոգևորականութեան օժանդակ դրամագլխի վերաբերմամբ և իր կարծիքներն այս հարցի մասին առաջարկել ի հաստատութիւն սահմանուած կարգով, և բ) սահմանել հոգևոր հաստատութիւնների հաշուետուութեան կարգը նրանց տուած արդիւնքները ծախսելու վերաբերմամբ. 2) յանձնել երկրագործութեան, պետական կալուածքների և Ներքին գործերի մինիստրներին փոխադարձ համաձայնութեամբ որոշելու ա) այն կանոնները, որոնց համաձայն հայ-լուսաւորչական եկեղեցու կալուածներն և դրամագլուխները պէտք է յանձնուեն մինիստրութիւններին և բ) այն կանոնները, որոնց համաձայն պէտք է կառավարուեն յիշած կալուածները։

Եւ III. Ի փոփոխութիւն մինիստրների կոմիտեի 1898 թուի մարտի 26-ին Բարձրագոյն հաստատուած վճռի՝ որոշել— իրաւունք տալ երկրագործութեան մինիստրներին այս կանոնագրութեան առաջին յօդուածի հիման վրայ հայ-լուսաւորչական եկեղեցու կալուածները արքունի վարչութեան մէջ ընդունելուց յետոյ՝ փոխադարձ համաձայնութեամբ՝ յայտնի կացուցանել այն գոյքերը, որոնցով ապահովուէր ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան իրաւասութեան տակ առնուած ուսումնարանների գոյութիւնը և յետոյ՝ ա) ցոյց տալ այն գոյքերը, որոնց անհրաժեշտ է թողնել ուսումնարանների անմիջական կարիքների համար, բ) որոշել՝ համապատասխան միւս կալուածների արդիւնքի՝ այն դրամական գումարների չափը, որոնք պէտք է տրուեն իւրաքանչիւր տարի Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեանը՝ յիշած ուսումնարանների պահպանութեան համար։

«Правит. Вѣстн.»-ում կարդում ենք. «Թէ ինչպէս հայ-լուսաւորչական եկեղեցու հոգևորականութիւնը կառավարում է իրան պատկանող կալուածները, դրա մասին Կովկասեան Բարձր Իշխանութեան հաւաքած տեղեկութիւններից երևաց, որ այդ վարչութիւնը չէ համապատասխանում ոչ պետական իշխանու-

թեան նպատակներին, ոչ էլ հէնց իր՝ եկեղեցու օգուտներին։ Հայ-լուսաւորչական եկեղեցական դպրոցները և նրանց պատկանող գոյքերը ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան տեսչութեանը յանձնելու մասին 1897 թուի յունիսի 2-ից և 1898 թուի մարտի 26-ից արձակուած Բարձրագոյն հրամաններից յետոյ հայ-լուսաւորչական հոգևոր երարխիայի կողմից դիմադրութիւն սկսուեց, որ արտայայտուեց նրանով, որ իր ձեռքում պահեց մի քանի կալուածներ, որոնցով պէտք է ապահովուէր դպրոցների գոյութիւնը։ Դրա նման երևոյթները վերացնելու համար անհրաժեշտ է համարուած կենտրոնացնել հայ-լուսաւորչական եկեղեցու գոյքերի վարչութիւնը կառավարչական հիմնարկութիւնների տեսչութեան մէջ։ Այդ առարկայի վերաբերմամբ Մինիստրների Կոմիտեի որոշումը արժանացաւ Բարձրագոյն հաստատութեան ներկայ տարուայ յունիսի 12-ին։ Այդ օրէնքը պահպանելով հայ-լուսաւորչական եկեղեցու սեփականութեան իրաւունքը մատնանիշ արուած գոյքերի վրայ՝ չէ զրկում նրան ստացուող եկամուտներից այն մասում, որը ազատ կը մնայ դպրոցների պահպանութեան համար ծախսերը ծածկելուց յետոյ։ Հայ-Լուսաւորչական եկեղեցու կարիքները հոգալուց յետոյ ի նկատի կայ եկամուտների 5% յետ գցելու միջոցով հիմք դնել այդ եկեղեցու օժանդակիչ դրամագլխի։ Մի այդպիսի դրամագլխի կազմակերպութիւնը կարող է ապահովել հայ-եկեղեցու բարօրութեան կանոնաւոր զարգացումը, այն ինչ այժմ այդ դաւանութեան պատկանող նշանաւոր թուով հաստատութիւնների մէջ, որոնք ընդարձակ կալուածներ ունեն, կան շատ ծուխեր, որոնց միջոցները չափազանց սուղ են, և գիւղական հոգևորականութիւնը քիչ է ապահովուած։»

—

Էջմիածնում ներքին գործերի մինիստրութիւնից Վեհափառ Կաթողիկոսի, նոյնպէս և Սինոդի անուան թղթեր են ստացուած, որոնցով կառավարիչ Սենատի բացատրութեան և որոշման համաձայն պետական եւ զինուորական ծառայութեան մէջ մտնող հայերը պէտք է ռուսերէն երդուեն։

—